# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼ-26/15 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | - | - | - | - | «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալն իրենից ներկայացնում է 35մմ տրամագծով երկկողմ պատկերով շրջան՝ վրադիր էլեմենտներով: Պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Մեդալը երկու կողմից եզրագծված է 0,5մմ լայնությամբ շրջանակով: Մեդալը եզերող շրջանակը պատված է պրուֆ մակերևույթով և որի վրա գրված է «ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ » բառերը: Մեդալի կենտրոնում տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը՝ 30x15 չափերով, որը ունի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գլխավերևում կորաձև եզերված Հայաստանի Հանրապետության եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն էմալներով: «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալի հիմնական գույնը ոսկեգույնն է: Մեդալի դարձերեսին առկա է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» հորիզոնական եռատող ռելիեֆային գրառումը, որի ներքևում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալը կապօղակի միջոցով միացված է մետաղյա հնգանկյուն կախիչին, որի միջոցով մեդալը՝ ասեղային ամրկի օգնությամբ ամրանում է համազգեստին: Հնգանկյուն կախիչի ամենալայն մասը 44.5-ից 46.2 մմ է, ամենաբարձր մասը՝ 48-ից 51 մմ: Կախիչը պաստառված է 23.5-ից 24.5 մմ լայնություն ունեցող մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի կենտրոնով միմյանց զուգահեռ և 4,8մմ հեռավորության վրա անցնում են 4,8 մմ լայնությամբ արծաթագույն 2 զոլակներ: Յուրաքանչյուր մեդալ պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ /160X110X32մմ/: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼ-26/15 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |